

տուրքերով կատարել զանոնք ի յիշատակ եկեղեցւոյ սուրբերու եւ վկաներու. մասնաւորապէս օրեր նշանակուեցան Յովհաննէս Մկրտչի եւ Առաքելոց: Մեհեաններու նուիրական հողերն ու եկամուտները յատկացուեցան այժմ եկեղեցիներու, փոխանակ քուրմերու այժմ քահանաներ կարգուեցան, նոյն իսկ նախկին քուրմերէն եւ քրմորդիներէն: Չարմանալի պէտք չէ երեւայ, եթէ տեսնենք հայ ժողովուրդի քով տակաւին մնացած մատաղները, որոնք անշուշտ մնացորդներ են հեթանոսական զոհերու քրիստոնէական տարազի տակ իբրեւ ազապ, աղքատներու հանդէպ ողորմութեան եւ սիրոյ ցոյց:

Անոնք համոզուած էին թէ ընդարձակ աշխարհի հեթանոս ժողովուրդ մը երեկոյէն առաւօտ մէկ անդամէն չէր կրնար հրաժարիլ իր հայրենական աւանդութիւններէն եւ սովորութիւններէն եւ ոչ ալ մերկանալ հեթանոսութիւնն եւ զգենուլ քրիստոնէութիւնը. այս գործողութիւնը կը կարօտէր ժամանակի, իրենց յաջորդները սերունդէ սերունդ պիտի վատտակէին այս ասպարէզի վրայ, իրենք տնկեցին, որդիք եւ թոռունք շուր պիտի տային եւ միայն թոռներու որդիք պիտի վայելէին ծաղկալից ծառն եւ անոր պտղաբեր արդիւնքները: Իսկ այս ճանապարհի վրայ պիտի ապրէր անշուշտ եկեղեցին նաեւ յեղաշրջումի փորձեր. հեթանոսամիտ տոգոհներէ, այսպէս ըսուած ծայրայեղ ազգայնականներէ. Փաւստոս կը յիշէ դէպք մը Վրթանէսի օրով յԱշտիշատ (Գ. 3). այլուր (Գ. 11) կը յիշէ սաստիկ ընդհարում մը Հայոց եւ Պարսից մէջ, երբ մեծ թուով կորուստ ունեցան Հայերը, կոտորուեցան յանուանէ հայ աւագանին: Վրթանէս եպիսկոպոսապետ այդ անկեալները «նահատակներ» անուանեց ազգի եւ կրօնի համար. «զիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտենից, զի ամենայն ոք զսոցա յիշատակ քաջութեան իբրեւ Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ. եւ մեք տօնս արասցուք եւ ուրախ լիցուք»: Արդէն ամրացած էր հաւատքը նոր սերունդին մէջ: Յաջորդ սերունդը ի վիճակի էր արդէն յանուն քրիստոնէութեան դիմադրաւ ելլելու Մաքսիմինոս Դագա կայսեր լեզէոններուն դէմ (312ին), որոնք քրիստոնէայ Հայաստանի վրայ պատերազմի կու գային: Եւսերիոս Կեսարացի (Թ. 8), որ կը պատմէ դէպքս, կ'աւելցնէ թէ յաջողեցան Հայերը քաջօրէն յետս մղելու կայսերական բանակը (հմմտ. Փաւստոս, Գ. 11):

Հ. Ն. ԱՎԻՆԵԱՆ

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ
ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ
ԱՌ ՄԵՀՐՈՒԺԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՅՈՑ

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ

Դիոնեսիոս երիտասարդ էր տակաւին, երբ կ'ունկնդրէր Որոգինէսի դասախօսութիւններուն յԱղեքսանդրիա քրիստոնէական ուսմանց Դպրոցին մէջ: Նա շարունակեց հետելիլ ուսմանց նաեւ Հերակղասի օրով, որ բարձրացած էր նոյն Դպրոցի կաթեղը, Որոգինէսի անկէ մեկնելէ յետոյ: 231/2ին վախճանելով Աղեքսանդրիայի Դեմետրիոս եպիսկոպոսը, անոր յաջորդ ընտրուեցաւ Հերակղաս, իսկ Դպրոցին գլուխ կարգուեցաւ Դիոնեսիոս: Հերակղաս մեռաւ 247/8ին. եւ աթոռին վրայ յաջորդ Դիոնեսիոս հրաւիրուեցաւ:

Դեկոսի հալածանաց օրերուն (249—251) հալածանքի ենթարկուեցաւ նոյնպէս Դիոնեսիոս: Դեկոսի մահէն ետքը (251 նոյ.) վերադարձաւ ան իր աթոռը: 252—256 տարիներուն խաղաղութիւն վայելեց Աղեքսանդրիոյ Եկեղեցին: Հալածանքի հրդեհը միւսանդամ բորբոքեցաւ 257/8ին Վաղերիանոս կայսեր հրամանով, մասնաւորապէս յԱղեքսանդրիա: Դիոնեսիոս աքսորուեցաւ Լիբիայի Կեփրոյ քաղաքը եւ ապա ի Կողզութիոն: Դագլիէնոսի հրովարտակը կը թոյլատրէր (262 մարտ), որ աքսորական եպիսկոպոսները վերադառնային իրենց թեմերը: Դիոնեսիոս դարձաւ Աղեքսանդրիա: Կը պատմէ Եւսերիոս, որ 264/5ին հրաւիրուած էր Դիոնեսիոս Անտիոքի ժողովին մասնակցելու. բայց ան իր բարձր տարիքին եւ տկարութեանց պատճառաւ հրաժարած էր: Դիոնեսիոս նոյն քաղաքը ժողովի կանչուած էր նաեւ 251/2ին: Վախճանեցաւ նոյն 264/5 տարւոյն:

Եւսերիոս «Մեծ» կ'անուանէ զԴիոնեսիոս. մեծ եւ ականաւոր դէմք հանդիսացաւ ան իր անձնագոհ, բազմազիմի եւ շրջապէսեց զործունէութեամբ: Ամէնուն աչքերը յարած էին իրեն: Եւսերիոս կը թուէ անոր թղթակցութիւնները, գրուած ամէն ուղղութեան, մերձաւորին եւ հեռաւորին: Այս թուղթերը, որոնք բազմազան բովանդակութեամբ են, կը կազմեն յատկապէս իր գրականութիւնը. ունեցած է նաեւ ինքնուրոյն գործեր. ասոնք չեն հասած մեզի: Իր նամակներու եւ գործերու մասին խօսած է Եւսերիոս եւ ինչ ինչ յառաջընթացութիւններ տուած: Կան անոնցմէ կոչումներ նաեւ ուրիշ հեղինակներու քով: Անվատահելի են ուշ ժամանակի հեղինակներու քով յառաջ բերուած կոչումնք Դիոնեսիոսի անունով. ոմանց անհարազատութիւնը արդէն ապացուցուած: Այս եւ նման հարցերու շուրջ տես Otto Bardenhewer, Geschichte der altkirchlichen Literatur 2 (Freiburg i. Br. 1903), 167—191:

Ես նկատի պիտի առնեմ այս տեղ Դիոնեսիոս Աղեքսանդրացւոյ այն գործերը միայն, որոնք ամբողջութեամբ կամ հատակոտորներով պահուած են հայ գրականութեան մէջ:

ԹՈՒՂԹ ԸՆԴԴԷՄ ՊԱՒՂՈՍԻ ՍԱՄՈՍԱՑԻՈՅ

1. Դիոնեսիոսի Եպիսկոպոսապետի Աղեքսանդրացւոյ Թուղթ Ընդդէմ Պաւղոսի Սամոսացւոյ առ հարս Ժողովոյն Անտիոքայ:

Եւսերիոս Կեսարացի (Պատմ. Եկեղ. է. 27) կը պատմէ, թէ Անտիոքի Դեմետրիանոս Եպիսկոպոսի յաջորդեց Պաւղոս Սամոսացի: «Բայց սա արտաքոյ խոստովանութեան Եկեղեցւոյ խորհեցաւ ի վերայ Քրիստոսի խորհուրդ տկարութեան եւ աղքատութեան իրրեւ ի վերայ դուզնաքեաց մարդոյ: Աղաչեցին զԴիոնեսիոս, այն որ էրն յԱղեքսանդրիա, դալ նմա ի ժողովն, որ եղև վասն նորա: Եւ նա հրաժարեաց վասն ծերութեան եւ տկարութեան մարմնոյ իւրոյ. եւ զրեաց եւ եդ ի թղթի եւ եցոյց զմիտս եւ զխորհուրդս, զոր ունէր նա վասն այսր խնդրոյ» (էջ 582 ըստ հայ հին թարգմանութեան): Այս թուղթը Յերոնիմոս (De vir. ill. c. 69) կ'անուանէ adversum Paulum Samosatenum epistola, նմանապէս նաև Թէոդորետոս (Haeret. fab. comp. II, 8):

Յիշեալ Ժողովը գումարուած էր 264/65ին: Նոյն խնդրոյ շուրջը 269ին միւսանգամ ժողովք տեղի ունեցաւ. ժողովական հարք իրենց չըջարեալանին ընկերացուցած էին Դիոնեսիոսի այս թուղթը (Եւս. է. 30): Թուղթս չէ հասած մեղի: 1608ին Փ. Տուրրիանոս Ս. Ժողովոց հրատարակութեան մէջ ներս առած էր նաև հետեւեալը. τοῦ μακαριωτάτου Διονύσιου πάπα 'Αλεξανδρείας ἐπιστολὴ πρὸς Παῦλον τὸν Σαμοσαίτων, γένομενον ἐπίσκοπον ἐν 'Αντιοχειᾷ. Արդէն Վալեղիոս ի ծանօթագրութիւնս Եւսերիոս Եկեղ. Պատմութեան ուշադիր եղած էր, թէ կեղծ է թուղթս, վասն զի Դիոնեսիոս ոչ թէ Պաւղոսի, այլ Անտիոքի Ժողովական Հարց գրած էր իր Թուղթը: Այս տեղ Պաւղոս Սամոսացւոյ կողմէ 10 խնդիր կը ներկայացուի, որոնց լուծումը կու տայ Դիոնեսիոս: Գիտունք գրուածքս առ հասարակ անվաւերական կը համարին, գրուած Ե. դարուն Ապողինարեանց կամ Միարնեայց վարդապետութեան ջատագովութեան համար: Կեղծ թուղթս հրատարակուած է նաև Sacrosancta Concilia... curante Nicolao Coleti, t. I (Venetiis 1778) էջ 870—907 եւ Mansi, SS. Conc. Coll. I 1759, էջ 1039—1088: Առ այս Dittich, Dionisius der Große von Alexandrien. Eine Monographie, Freiburg i. Br. 1867, էջ 123—127. Bardenhewer, II, 187—188.

Ինձ կը թուի թէ Դիոնեսիոսի այս Թուղթը իր հարազատ օրինակի մէջ թարգմանուած էր ամբողջութեամբ Ե. դարու առաջին կէսին դասական հայերէնով, ինչպէս հետեւեալ հատակոտորները * ցոյց կու տան: Այս հատակոտորները որ եւ է ազերս չունին կեղծ թուղթին հետ:

* Կը կիրարկեմ հետեւեալ համառոտութիւնները.
Er. Երեւան, Պետական Թանգարանի ձեռագիրք (այժմ փոխադրուած Երեւան, Պետ. Մատենադարան):
P. Պարիս, Bibliothèque nationale, Cod. Arm.
V. Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարեան Մատենադարան, ըստ Ցուցակին Հ.Բ.Աար-գիսեանի:

ա. «Երանելոյն Դիոնեսիոսի Եպիսկոպոսի Աղեքսանդրու (var. Աղեքսանդրի) ի Հակածառէն (W ի հակածառն) Պաւղոսի Սամոսացւոյ (W կ'աւելցնէ՝ ասացեալ յաղագս տնաւրէնութեան փրկչին):

Գրեալ է թէ Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհս, զի զորդին իւր միածին աւաքեաց (W ետ): Քանզի եղև մեզ Աստուած Յիսուս Քրիստոս, այն որ յամենայն ժամ Քրիստոս Տէր. եւ եղաք նորա Ժողովուրդ, այնձ որ յառաջագոյն որպէս ոչխար մողորեալ էաք, եւ դարձաք առ հովիւն եւ փրկիչ անձանց մերոց. քանզի մեզ ծնաւ մանուկ եւ մեզ եղև փրկիչ ըստ մարգարէական մերոց. քանզի մեզ ծնաւ մանուկ եւ մեզ եղև որդի տուաւ մեզ: Կան ձայնին. Եսայիաս ասէ թէ Մանուկ ծնաւ մեզ եւ որդի տուաւ մեզ: Քանզի այն որ էր ի սկզբանէ... վ. եւ եղև մարդ, այլ ոչ մեկնեցաւ ի նմանէ, աղքատացաւ կամաւորութեամբ եւ աւետարանեաց աղքատաց զփրկութիւն եւ զարքայութիւնն երկնից: Որում արժանի լիցուք» եւն:

= Ձեռագիրք. P. 110, 80բ—81բ (ԺԲ): W. 1, 44ա—45բ (ԺԵ. ց. 2): V. 202, 105ա—106ա (1637. ց. Բ. 74): 228, 34բ (1847 = Eriv. 78. ց. 440): էջմ. 1525, 75բ:

Հրտ. Pitra-Martin, Analecta Sacra Spic. Solesmensi, t. IV, 182 (Թարգմ. 422):

Այս հատակոտորէն մաս մը ունինք, յայտնապէս բուն ձեռագրէն հանուած, հետեւեալ պատառիկի մէջ յառաջ բերուած կնիք Հաւատոյ վկայութեանց հաւաքման մէջ, շատ ուշագրաւ խորագրիս տակ.

բ. «Նորին Դիոնիսի (Եպիսկոպոսապետին Աղեքսանդրիայ) ի լուծմանէ Ժ. բանին (տպ. բանէն), որ առ Սամոսացին Պաւղոս: Կը սկսի. «Առաքեալ ասէ. Որոց հարքն, յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած: Եւ Եսայիաս ասէ. Մանուկ ծնաւ մեզ, եւ Որդի տուաւ: Քանզի այն, որ էր ի սկզբանէ՝ տուաւ մեզ... (տես վերը առաջին մասին վերջաւորութիւնը. ասկէ սկսեալ կը շարունակուի եւ կ'աւարտի այսպէս). եւ պատգամս մատուցեն եւ զփրկութիւն Տեառն պատմեցեն»:

= Կնիք Հաւատոյ, էջմիածին, 1914, էջ 104—106 (Հմմտ. էջ 115):

Ասկէ կը տեսնուի. թէ Դիոնեսիոսի «Հակածառն» կամ «Հակածառքն» ուղղուած էր ընդդէմ Պաւղոս Սամոսացւոյ եւ այն բաժնուած ճշդիւ 10 հատուածներու, իրրեւ վարդապետութիւնք Սամոսացւոյ եւ լուծմունք Դիոնեսիոսի: «Կնիք Հաւատոյ» հաւաքման հաւաքիչը, նոյնպէս ձառնարկներու ձառնարկը ունեցած են իրենց տրամադրութեան տակ ամբողջ գործը: Ասկէ հանուած կ'երեւան նաև յետագայ հատուածները, որոնք թէ նկարագրով եւ թէ լեզուով նոյն գրուածքէ մասեր կը թուին:

գ. Երանելոյն Դիոնեսիոսի Եպիսկոպոսապետի Աղեքսանդրու ի Գալուսան Տեառն յաւանակաւ յերուսաղէմ:

էջմ. էջմիածին, Պետական Ձեռագրատուն (այժմ փոխադրուած Երեւան, Պետ. Մատենադարան):
W. Վիեննա, Մխիթարեան Մատենադարան:
Վ. վերջաւորութիւն:
Նիկոսիա, Կիպրոսի Նիկոսիա քաղաքի Ս. Աստուածածնի Եկեղեցւոյ ձեռագիրք (ըստ ցուցակին Հ. Ն. Ակիւնեանի, անտիպ. այժմ փոխադրուած Անթիլիաս):
Բէյրութ, Մատենադարան Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ի Բէյրութ:

Ի վերայ յաւանակի նստաւ Փրկիչն մեր Քրիստոս եւ մտեալ յԵրուսաղէմ՝ զըզեցաւ քաղաքն ամենայն: Չայս Չաքարիա յառաջագոյն ասաց. Ուրախ լիք դուստր Սիոնի...

Վ. Ընդ որս եւ մեք ընդ տղայսն աստուածարանեցուք, գոչելով (var. գոչեցուք) զսարսափելի եւ զարարչական օրհնութիւնն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

= V. 202, 290ա (1637. ց. Բ. 88): 212, 357բ 4ԺԳ. ց. Բ. 226): 228, 154ա (1847 = Er. 78: ց. Բ. 449): 306, 9բ—10ա (ԺԱ.ՃԲ. ց. Բ. 1177): Էջմ. 961, 276ա:

Գ. Նորին Դիոնեսիոսի Աղեքսանդրի եպիսկոպոսի: Դարձեալ խորհուրդ արարին աստուածասպանքն վասն Տեառն...: Վ. Եւ Տէր ի Սիոնի գոչեցէ եւ յԵրուսաղէմէ տացէ զձայն իւր: = V. 228, 156բ (1847 = Er. 78: ց. Բ. 450):

Ե. Սրբոյն Դիոնեսիոսի Աղեքսանդրու հայրապետի (ի Չարչարանն Տեառն):

= P. 110, 349ա—բ (ԺԲ.) = V. 210, 33բ—34ա (1824): V. 212, 410ա—411ա (ԺԳ. ց. Բ. 229):

Հրտ. Pitra-Martin, Analecta Sacra Spic. Solesmensi, t. IV, (1883), 178—179 (Թարգմ. 419—420):

Գ. Ս. Դիոնեսիոսի Աղեքսանդրու եպիսկոպոսի (ի Յարութիւն Փրկչին մերոյ):

Յարեաւ այսօր ի մեռելոց կենդանին յաւիտենից Քրիստոս: Եւ տեսեալ կանանց զյարութիւն նորա ընթացեալ պատմէին առաքելոցն: Չայս Եսայի մարգարէն յառաջագոյն ասաց, թէ կանայք որ զխմեալ զայք...:

Վ. եւ ի ձեռն առաքելոցն քարոզեցաւ: = P. 110, 396բ—397բ (ԺԲ.) = V. 210, 33բ: V. 202, 392ա (1637. ց. Բ. 96): 230, 4բ (ԺԳ. ց. Բ. 483): W. 99, 1ա—բ (ԺԹ. ց. Բ. 368): Երուսաղէմ 1, 32ա: Նիկոսիա, 4, 206ա: Բէյրութ, Պատրիարքարան, Թ. 1, 698ա: Էջմ. 966, 280բ: 993, 473բ:

Հրտ. Pitra-Martin, Analecta Sacra Spic. Solesmensi, t. IV, 180—181 (Թարգմ. 420—422):

Է. Սրբոյն Դիոնեսիոսի Աղեքսանդրու եպիսկոպոսի (ի Համբարձումն Տեառն):

Ե՛հան զաշակերտան մինչեւ ի Բեթանիա եւ ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա...: Չայս կանխաւ զուշակեաց Երանելին Դաւիթ, թէ Համբարձաւ Աստուած օրհնութեամբ...:

Վ. Եւ միով երկրպագութեամբ խոստովանիմք զԵրրորդութիւն աստուածութեանն հարթ հաւասար հասարակ անբաժանելի միաւորութեամբ: Որում փառք...:

= P. 110, 432ա (ԺԲ.): 115, 79բ (ԺԳ.): V. 202, 418բ (1637. ց. Բ. 99): 228, 157բ (1847 = Er. 78: ց. Բ. 450): Էջմ. 1525, 403բ: Նիկոսիա, 4, 220բ: Բէյրութ, Պատրիարքարան, 1, 716ա:

Հրտ. Pitra-Martin, Analecta Sacra Spic. Solesmensi, t. IV, 180—181 (= 422):

Ը. Կոչմունք ի Գիրս Թղթոց. «Եւ միւս Դիոնեսիոս Աղեքսանդրացի գրէ ընդդէմ Պաւղոսի Սամուսացոյ այսպէս

Չթիկունս իմ ետու ի հարուածս... Ով իցէ սա, եթէ ոչ Աստուած, որ եթուք յերկիր եւ արար կաւ...: = Գիրք Թղթոց, էջ 459—460 (Սահակայ ընդդէմ Երկարնակաց):

Ք. Նորին (Դիոնեսիոսի). Չէ մարդ որ խաչեցաւ, այլ սուրբ Միածինն Բանն եւ որդին Հօր: Տես զի զբանն ասաց խաչեալ զխաչէն եւ ոչ սոսկ մարդ: (Հմմտ. Գիրք Թղթոց, էջ 460):

Հրտ. Pitra-Martin, Analecta Sacra Spic. Solesmensi, t. IV, 182 (= 422):

ՀԱՏԱԿՈՏՈՐՆԵՐ

2. Երանելոյն Դիովնիսոսի եպիսկոպոսի Աղեքսանդրացոյ ի Թղթոյն որ առ Ստեփանոս եպիսկոպոս Հոովմայ:

Քանզի որպէս իմաստութիւնն ըստ ազգս, յանձինս սուրբս փոխեալ, սիրելիս Աստուծոյ եւ մարգարէս կազմէ...: Վ. զորս եւ զործիցեն, ընդ ամենայնի հատուցանիցեն Տեառնն: Անդ. = Տիմոթէոս Կուզ, Հակաճառութիւն. Էջմիածին, 1908, էջ 4—6:

Թարգմանած F. C. Conybeare, Newly discovered Letters of Dionisios of Alexandria to the Stephen and Xystus: The English history Review 25 (1910) 111—114.

3. ա. Նորին յառաջոյն Թղթոյն որ առ Քաիւստոս եպիսկոպոսապետն Հոովմայ:

Քանզի գրեցեր այսպէս, զաստուածասէր աւրինադրութիւնն արտագրելով...: Վ. Իսկ բանք իմ ոչ անցանին: = Տիմոթէոս Կուզ, անդ, էջ 6:

3. բ. Նորին առ նոյն յերրորդ Թղթոյն: Իսկ եթէ զնախանձ ունել Աստուծոյ...: Վ. որ ի մեզ աճել եւ առաւելուլ միշտ վայել է: = Տիմոթէոս Կուզ, անդ, էջ 7: Կնիք Հաւատոյ, էջ 104 (Երանելոյն Դիոնեսիոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրաց Երրորդ Թղթոյն որ առ Քուստոս եպիսկոպոսապետ Հոովմայ):

Այս Թ. 3ա—բ Թղթերու անգլ. թարգմանութիւնը տես Թ. 2: 3. գ. Եւ Մեծն Դիոնիսիոս գրէ առ Քուստոս եպիսկոպոսապետն Հոովմայ: Յղացաւ Աստուած Բանն ի սուրբ Կուսէն եւ ծնաւ ի նմանէ մարդ կատարեալ...:

Վ. բաց միայն Տէր մեր, նա մտցէ եւ ելցէ: = Ստեփանոս իմաստասէր, էջ 24, տ. 416—423 (= Արարատ, 1902, էջ 389):

«Դիոնիսիոս Աղեքսանդրիայ եպիսկոպոս Մեհրուժանայ սիրելի եղբաւր եւ որոց էքք ի Հայաստան աշխարհի յԱստուծոյ Հաւրէ, ի Քրիստոսէ եւ ի Հոգւոյն սրբոյ ի Տէր ողջոյն»:

Դիոնիսիոս իր առ Բասիլիդէս Պենագոլոսոյ եպիսկոպոս գրած թուղթին մէջ այսպէս կ'արտայայտուի.

Διονύσιος Βασιλειῶν τῷ ἀγαπητῷ μου υἱῷ καὶ ἀδελφῷ συλλειτουργῷ καὶ θεο-
πρεπεῖ ἐν Κυρίῳ χαίρειν (Pitra, Juris ecclesiastici... I 541 (Դիոնիսիոս Բասի-
լիդէայ սիրելի որդւոյ իմում եւ պաշտօնակից եւ աստուածամերձ եղբոր ի
Տէր ողջոյն):

Իսկ առ Նովատիոս թղթին (Եւս. 2. 45) մէջ պարզուի.

Διονύσιος Ναύατῳ τῷ ἀδελφῷ χαίρειν (Դիոնիսիոս Նովատեայ եղբոր
ողջոյն):

Այս ձեւը իրեն օրինակ ունի Առաքելական թղթերը եւ անոնց համա-
ձայն կ'ենթարկուի զարգացումի, ինչպէս հոս: Հայ բնագրին «որ էք յԱստու-
ծոյ, ի Քրիստոսէ եւ ի Հոգւոյն սրբոյ ք. ի Տեառնէ ողջոյն» կ'ենթադրէ «Պա-
ղոս առաքեալ... Եկեղեցւոյդ Աստուծոյ որ է ի Կորնթոս... շնորհք ընդ ձեզ
եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ»
եւ այլն:

Թղթին առաջոյն «Սեւանոս» հարկ է ըստ այսմ համարիլ աղաւաղում
որ ծագած է հաւանօրէն

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅ անուններու
Ս ԵՒ ԱՆԴԵԱՅ ընթերցմամբ:

Նման աղաւաղում կ'ենթադրէ

ՄԵՀՐՈՒԺԱՆԱՅ որ վերածուած է
ՔԱՀ ԱՆԱՅԻՑ

Դիոնիսիոս գրած է թուղթս ժողովի մը կողմէ, որ գումարուած է
«ՄԺԲ կաթողիկոս»ներու մասնակցութեամբ: Այս թիւը, ինչպէս նկատած
էր Հ. Գաթրըճեան, շատ մեծ է գաւառական ժողովի մը համար: Սկզբնա-
գրին էր հոս հաւանօրէն «Մեք ժԲ» կաթողիկոսք, որով իմանալու է «եպիս-
կոպոս»: Նիկիոյ ժողովի Կանոնաց հայերէն թարգմանութեան մէջ «կաթո-
ղիկոս» թարգմանուած է Մետրապոլիտը, այս իմաստով դործածուած է բառս
նաեւ այլուր: Մեր տեղեկութիւնները Գ. դարու ժողովներու մասին շատ աղ-
քատ են: Ինչպէս կը տեսնուի՝ հարցը դրուած է ժողովին Հայոց Մեհրուժան
եպիսկոպոսէն. «Ժողովեցաք եւ քննեցաք, կ'ըսէ Դիոնիսիոս, որպէս եւ դտաք
ի Գրոց սրբոց՝ ցուցանեմք ձեզ»: «Ի Գրոց իմանայք, զի՞ առաքեցէք առ իս-
ահա Արարածք եւ Մարգարէք եւ Աւետարանք առ ձեզ են. ի նոցանէ կարող
էք ուսանել եւ տալ ապաշխարութիւն անձանց ձերոց»: Վերագոյն ակնար-
կեցի, թէ հոս խօսքը Անտիոքի 252ի ժողովի մասին պէտք է եղած ըլլայ:

Ժամանակի մասին ակնարկութիւն մ'ունինք հետեւեալ տողերու մէջ.
«Վասն զի առ Տէր կամարար. թէ ոչ պահիցէք զպատուիրանս զայս, ար-
զեցին երկինք զանձրեւ եւ երկիրս զպտուղ իւր. սատակեսցի երէ եւ գրաստ

եւ թռչուն: Այս ամենայն յամս ձեր եղեւ. ոչ իմանայք, եղբարք, քննեցէք եւ
ի բաց ընկեցէք զշարն ի միջոյ ձերմէ»: Այս տեղիքը կը համարիմ թէ այն
ժամատախտի մասին է, որուն համար Եւսեբիոս արձանագրած է իր ժամա-
նակագրութեան մէջ. Յաւուրս Դեկոսի «ախտ սրածութեան ի բազում կող-
մանս տիեզերաց տարածեցաւ. եւ աւելի յԱղեքսանդրիա եւ յԵգիպտոս. եւ
պատմէ Դիոնիսիոս» (Քրոնիկոն, Բ., 298): Եւ իրօք ալ խօսած է Դիոնիսիոս
իր թղթերուն մէջ այս անցքերու մասին, նկատի առնելով յատկապէս 262 տա-
րին (հմտա. Եւսեբ. Եկեղ. Պատմ. է. 21—22):

Հայաստան 30 տարիէ ի վեր ընդունած էր քրիստոնէութիւնը: Եկեղեցին
տակաւին չունէր ժողովներով հաստատուած Կանոններ, որոնց համաձայն
դեկալարութիւն Եկեղեցւոյ հովիւները բարեկարգական հարցերու մէջ: Իր
դարձ ժողովուրդին համար Ս. Գրիգոր Լուսաւորիչ հեղինակութիւն էր: Իր
մահէն ետքը երբ յաջորդեց Մեհրուժան, դտա ինքզինքը դժուարութեանց
առջեւ: Հայաստանի մերձ էր Կապադոկիայի Մետրապոլիտները, ուր
այն ժամանակ կը պայծառանար Փիլիպիտոս: Բայց այս դարուն ամէնուն
աչքերը ուղղուած էին Աղեքսանդրիոյ եպիսկոպոսին, Մեծին Դիոնիսիոսի,
որ իրբեւ աշակերտ Որոզինի, դասապետ քրիստոնէական Ուսմանց Դպրոցի,
կը վայելէր հեղինակութիւն, եւ ամէն կողմէ իրեն կը դիմէին որ եւ է վար-
դապետական եւ կանոնական իրաւագիտութեան հայոց հարցերու մէջ: Ան-
շուշտ Կապադոկիայի Մետրապոլիտ խորհուրդով հանեցին Հայերը իրենց
դժուարութիւնները Աղեքսանդրիոյ եպիսկոպոսապետին առեանը:

Հին Եկեղեցին, որ տակաւին գրաւոր օրինագիրք մը չունէր իրեն ուղղ-
ցոյց կարգ մը բարոյագիտական հարցերու լուծման համար, կը հետեւէր տա-
կաւին Նոր եւ Հին Կտակարաններու ցուցմունքներուն: Այսպէս կը շեշտուի
նաեւ հոս. «Ահա Արարածք եւ Մարգարէք եւ Աւետարանք առ ձեզ են, ի նո-
ցանէ կարող էք ուսանել եւ տալ ապաշխարութիւն անձանց ձերոց»: Բայց
կային հարցեր, որոնք Նոր Կտակարանին մէջ ներդրամտութիւնը
նային, Հին Կտակարանի համաձայն անբաւելի էին: Այս զանազանութիւնը
Հինին եւ Նորին մէջ կը շեշտուի Կանոններու Նախերգանքին մէջ: Դժբախ-
տաբար այս Նախերգանքը, ինչպէս եւ Վերջարանը ամէն մասամբ հարազատ
չերեւար: Այն իրողութիւնը, որ Հայոց Կանոնագիրքը է. դարուն ենթար-
կուած է փոփոխութեան, ներմուծմամբ յաւելուածներու, յատկապէս Ս. Գրքէ
առնուած անկարեւոր վկայութիւններու, կը թելադրէ մեզ տեսնել նաեւ Կա-
նոններու, մասնաւորապէս Նախերգանքին եւ Վերջարանին մէջ օտար ձեռքի
մը յաւելուածներ: Բայց եւ այնպէս Կանոններու հասած են մեզի: Կանոններս,
մեզի հաւատալ, թէ անոնք յէականս անաղարտ հասած են մեզի: Կանոններս,
որոնք ապաշխարութեան խիստ հրահանգներ կը սահմանեն, կրնան համեմա-
մատուիլ Եւրոպայի ժողովրդին (306) որոշումներուն հետ, որոնք թէպէտ ժա-
մանակով կրսեր են, բայց դեռ կ'երեւցնեն խստապահանջութիւն:

Մասնաւորապէս ուշադրութեան արժանի է մեր Կանոններու երրորդ
դրուիւրը, որ կը շօշափէ մերձաւոր ազգականութեան մէջ կնքուած ամուսնու-
թիւնն եւ այս կէտի մէջ գործուած զեղծումները: Նկատելով որ Դիոնիսիոս
հոս իրեն առջեւ դրուած հարցի մը լուծումը կու տայ, աչքի առաջ կը բե-
րենք այս շրջանի Հայաստանը, որ քաղաքակրթապէս ենթարկուած էր երա-
նեան ազդեցութեան: Ըմբռնումներ, նաեւ ամուսնութեան մասին, որոնք

կ'իշխէին պարթեւ-պարսիկ ժողովուրդին քով, բնականապէս արձագանդ պիտի գտնէին նաեւ Հեթանոս Հայոց քով: Ծանօթ է պատմութենէն, թէ Տիգրան Գ. իրեն կին ունէր իր քոյրը Երատոյ: Այս դէպքը առանց տարակուսի միակը չէր: Մաքառելու համար այս եւ նման օրէնք դարձած չարաչար սովորութիւններու դէմ Մեհրուտան ներկայացուցած է Դիոնեսիոսի նաեւ այս խնդիրը: Թէեւ Կանոնիս մէջ կը պակսի «Որ կին առնէ... կամ գոյր», բայց կրնանք ենթադրել, թէ Սկզբնադրին մէջ պէտք է շեշտուած ըլլար այս կէտն ալ, ինչպէս կը տեսնուի արդեամբք նոյնը, այսպէս կոչուած «Երկրորդ Կանոնք Բարսղի» կանոնախմբի մէջ, առանց տարակուսի փոխառնուած այս Կանոնէն.

«ՃՄԱ. Բազում են մեքենայք սատանայի եւ բազում անգամ կորուսանէ գմարդիկ. կամ հայր ընդ դստեր, կամ քոյր ընդ եղբոր: Առաջին Օրէնք աչքի հրաւայեցին. եւ արժանի իսկ են. բայց յաղագս Որդւոյն Աստուծոյ գթով ժողովել զմորրեալսն: Եկեացեն յապաշխարութիւն. արժան է երթալ ի գողեանոցն եւ վաստակել մինչեւ ի վախճան. ԺԵ. ամ ընդ ունկնդիրս կացցէ. Ե. ամ ընդ ձեռամբ, թէ լիցի արժանի յետին թոշակի» (Մ. 810, 151բ):

«ՈՅ. Թէ ոք ննջէ ընդ զոքանչի կամ ընդ քեռ կնոջ իւրոյ, առաջին վարդապետք. ԺԵ. ամ եղին: Բայց վասն մարդասիրութեան. է. ամ ընդ ունկնդիրս կացցեն. Բ. ամս մտեալ յեկեղեցին ելցեն ընդ ապաշխարողսն՝ տրովք (տնանկաց) եւ բազում ողորմածութեամբ արժանի լիցին յետին թոշակին» (Մ. 810, 146բ. Դաւթեան, 127):

Հոս «Առաջին օրէնք այրել հրամայեցին» եւ «Առաջին վարդապետք. ԺԵ. ամ եղին» յայտնապէս այս Գ. Կանոնը կ'ախնարկեն: Այս աղերսի մէջ է, ինչպէս ինձ կը թուի, նաեւ տեղիքս. Միքայէլ Աղուանից կաթողիկոսը կը գրէ (Իբր 720ին) առ Թալիլէ Վրաց եպիսկոպոս, որ թոյլ տուած էր Աղուանից Վարազ իշխանին կին առնել Վարդանուհին — որոնք երկու դժի վրայ թոռներ էին. «Ձի՞ իշխեցեր լուծանել զկանոնեալսն ի սուրբ առաքելոցն աշակերտաց, որք յԱնտիոք ժողովեալ տարագրեցին զՊաւղոս Սամոստացին ի սուրբ եկեղեցոյ եւ սահմանեցին տառս կանոնակաւս, թէ Մի ոք իշխեցցէ զագգականն առնուլ ի կին: Եւ սրբոյն Աթանասի կանոնական հրաման է, եթէ Չէ ամուսնութիւն, այլ պրոնկութիւն, եւ երանելոյն Բարսղի վասն սորին գործոյ ասացեալ» (Մովսէս Դասխուրանցի, Գ. 13):

Ակնարկուած «Անտիոքի ժողովոյն Կանոնք» կը յարաբերեն Դիոնեսիոս Աղեքսանդրացոյ կանոնական թուղթն առ Մեհրուտան, յատկապէս Գ. Կանոնը: Անտիոքի այն ժողովը, ուր դատապարտուած է Պաւղոս Սամոստացի, գումարուած էր 264/65ին: Միքայէլ կաթողիկոս Անտիոքի ժողովոյն մասին իր տեղեկութիւնները քաղած է անշուշտ Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութենէն: Իսկ «Անտիոքի ժողովոյն Կանոնք», զոր ունինք Կանոնագրքի մէջ, որ եւ է խօսք չի պարունակեր մերձաւոր ազգականութեան մասին: Այս պատճառաւ ալ պէտք է հնագոյն ժողով մը, 252ինը նկատի առնել, որ գումարուած էր Նովատեանց հերձուածի քննութեան համար, այն է Դեկոսի հալածանաց օրերուն անկեանքներու ապաշխարութեան խնդիրը:

Նկատմամբ Ը. Կանոնին տե՛ս նաեւ Ելլիրայի ժողովի Ա. Կանոնը (Hefele, I, 155):

Բնադրիս հրատարակութեան ժամանակ աչքի առաջ ունեցած եմ Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի հետեւեալ ձեռագիրները.

- A 810, 109բ—111ա (1638)
- B 256, 137ա—138բ
- C 581, 135ա—136բ (1663)
- D 579, 193բ—195ա (1783)
- E 100, 174բ—176բ
- F 297, 125բ—127ա
- G 58, 275բ—278բ

Այս ձեռագիրներու դասաւորութեան մասին խօսած եմ թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի հայրապետի, Վիեննա 1930, էջ 93—107:

Կանոնները, ի բաց առեալ Ա. եւ ԺԱ. գլուխները, հրատարակուած են անջատ անջատ ի դիրս Արիստակէս արքեպ. Դաւթեան, Կանոնք Ս. ժողովոյ եւ Հարց Եկեղեցոյ. Պրակ Ա., Թիֆլիս 1904, էջ 58, 76, 96, 116, 121, 128:

Ընթերցուածներու բաժնին մէջ նկատի չեմ առած ուղղագրական վրէպակները, ինչպէս յ գրի անկումը աէն վերջը, թխտի, եղբայրք եւն:

Ա.—ԺԴ կանոններու կարգը Բ խումբի մէջ փոփոխութիւն կրած է այնու որ խմբագիրը ԺԳ կանոնը փոխադրած է Թ կանոնէն վերջը, որուն հետեւութեամբ եղած են.

—	Ժ
Ժ	ԺԱ
ԺԱ	ԺԲ
ԺԲ	ԺԳ
ԺԳ	—
ԺԴ	ԺԴ

Տրամաբանօրէն այս կարգը աւելի համաձայն է կանոնաց բխողականութեան:

EFG խումբը, որ կը հետեւի Բ. խումբին, դուրս ձգած է ԺԲ (= ԺԳ) կանոնը, որով ԺԴ կանոնը եղած է հոս ԺԳ: Մենք հետեւեցանք A խումբին:

40 քաւեալ եղիցուք ի մեղաց աւտարաց. քաւեսցուք զայնոսիկ, որ տգիտութեամբ յանցանեն. [ասէ, նոքա զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն¹². ոչ եթէ նոքա միայն, այլ եւ որ կցորդեն նոցա: Այժմ՝ որոշեցէք զնոսա եւ տուք նոցա ապաշխարութիւն, եւ իւրաքանչիւր ըստ մեղաց նոցա: Մի արտաքոյ աւրինաց, այլ ի Գրոց. ի մեղաց, զոր Աստուած անէծ եւ նզովեաց:

Ա. [Ի բաց կացցուք այսուհետեւ յ]արիւնահեղ [է¹³. վասն զի ասէ Տէր. «Եղիցի երեքեալ եւ տատանեալ յերկրի¹⁴»: Այլ այժմ՝ ապաշխարեցէ զամենայն աւուրս կենաց իւրոց եւ յաւուր մահուան իւրոց խառնեցի¹⁵:

50 Բ. Որ երեսնամեայ է եւ¹⁶ ընդ անասնոյ պղծի [քարկոծեցէք զնա, ասէ. այլ այժմիկ] ապաշխարեցէ զամենայն աւուրս կենաց իւրոց. եւ յաւուր մահուան իւրոց խառնեցի:

Գ. Որ կին առնէ զմայր¹⁷ կամ զղուստր¹⁸, ի հուր այրեցէք զնոսա: Անիծեալ¹⁹ որ առնէ զեղբար իւրոց զկին²⁰, վասն զի ընդ եղբար իւրում պղծի. զի մի են նոքա: Որ առնէ զհաւրեղբար իւրոց կին²¹, որ առնէ զզոքանչ կին²², որ առնէ զքենի կին, որ առնէ զթոռն կին, որ առնէ զհաւոյ կին, անիծեալ եղիցին նոքա. եւ որ շնայ ընդ քեռն²³ իւրում անիծեալ լիցի²⁴: Որոշե-

40 քաւեալք A: — 41 տգիտութեամբն EF, զարքայութիւն F: — 44—45 մի — մղաց չունի F: — 45 ի մեղ A: — 46 արիւնահեղէ ABD: Խմացի՛ր. Որ արիւնահեղ է, ապաշխարեցէ...: — 47 երկրի A: — 48—49 եւ — իւրոց չունին EF: — 49 խառնեցի D: — 50 երեսնամեայ BCDG. է չունին BCDEF ունին AG, անասունս G: — 50—51 յաւուր — իւրոց չունի G: — 52 յաւուրս D: — 54 եւ որ BD զկին BCEF կին AG: — 56 որ առնէ զքենի... զզոքանչ A, այսպէս համաձայն BCDG իսկ զքենի իւր EF: — 58 զնա ընդ քեռն իւ. A քեռ BCDG քեռն EF: — 60 դրաց

¹² Ա. Կորն. ԺԵ. 50. «Մարմին եւ արիւն զարքայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն»:

¹³ Սկզբնապիւրն էր հաւանորէն. «Ա. Այր արիւնահեղ ապաշխարեցէ...»:

¹⁴ Մն. Դ. 12. «Երեքեալ եւ տատանեալ եղիցես ի վերայ երկրի»:

¹⁵ «Պառնիմ» այս տեղ եւ ի յաջորդս պէտք է իմանալ ընդունիլ ի հաղորդակցութիւն Եկեղեցւոյ:

¹⁶ «Որ երեսնամեայ է» յայտնապէս աղաւաղուած բնագիր մը կ'ենթադրէ. կ'ակնարկուի Ղեւո. Ի. 15—16 «Եւ այր ոք... եւ կին ոք...» ուստի պէտք է վերակազմել. Եթէ այր ոք կամ կին...: Աստուածաշունչի մէջ քարկոծելու մասին հրահանգ չկայ:

¹⁷ Հմմտ. Ղեւո. Ի. 11. կը հրամայուի «մահու մեացին երկրորդն»:

¹⁸ Ղեւո. ԺԻ. 29:

¹⁹ Հմմտ. Բ. Օր. 20—22:

²⁰ Ղեւո. Ի. 21. «զկին» իմացիր «որ առնէ կին զեղբար իւրոց զկին». իսկ ի յաջորդս «կին» = զկին:

²¹ Ղեւո. Ի. 20:

²² Բ. Օր. ԻԷ. 23:

²³ Ղեւո. Ի. 17:

²⁴ Բ. Օր. 22:

ցէք զնոսա ի միմեանց եւ անջատեցէք. եւ ապաշխարութիւն նոցա ժԵ ամ դրան արտաքոյ. եւ Ե ընդ ապաշխարողս եւ Գ ամս աւրէնս⁶⁰ մի առցեն:

Դ. Այր յիսնեմեան եթէ կին արասցէ եւ յիսնեմեան կին եթէ առն լիցի, որոշեցին յեկեղեցւոյ: Ամենեքեան կարդացէք զնոսա աղճատեալս:

Ե. Կնքաւոր թէ պոռնկեցի, Գ ամս արտաքոյ. Դ՝ ընդ ապաշխարողս եւ Գ ամս աւրէնս մի առցէ:

Զ. Երիտասարդ թէ պոռնկեցի, կին նորա աւրէնս մի առցէ մինչեւ խառնեցին:

Է. Առնակին թէ շնասցի, Ժ ամ արտաքոյ եւ Ե՝ ընդ ապաշխարողս. եւ Գ ամս աւրէնս մի առցէ: Ապա եթէ դադատու է, ապաշխարութիւն նորա դրանց ի ներքոյ ապաշխարեցէ մինչեւ կատարեցի ժԵ ամս:

Ը. Եթէ ոք ի հաւատոս կացցէ ամիսս երկու եւ դարձցի յետս, նզովեալ եղիցի. որոշեցէք զամենայն աւուրս կենաց իւրոց իրբեւ զչարագործ, զի զաւանդ Տեառն իւրոյ կորոյս. եւ ընդ ապաշխարողս մի խառնէք յաւիտեան:

Թ. [Յաւուրս նոյի եղեւ ջրհեղեղն. վասն այնորիկ որ յաւսան զդատերսն Կայենի:] Եթէ զիւր խաւսեալ ոք յաւացի, մի խառնէք զնա յաւիտեան. զի գայլ եղեւ. եւ ոչ ետ աւրհնել զհարսանիս իւր: Եւ ի զաւակ նորա որ խառնի, անիծեալ լիցի:

Ժ. Երէց կամ սարկաւազ, թէ շնան կամ զողանան, մի պաշտեցեն:

ԺԱ. Առնակին թէ մեռցի եւ այրն ա՛յլ կին արասցէ, Գ ամս ընդ ապաշխարողս եւ Գ՝ աւրէնս մի առցէ:

ԺԲ. Հաւատաւոր թէ դայթակղեցի, թէ խորզով եւ սզով

BCD դրանց G. Ե ամ EF. ապաշխարողսն G. Գ. (G Դ) ամ AG: — 61 առցէ A:

62 յիսնեմեն B յիսնեմեան D ծ. ամեայ EF. յաջորդն ծ. ամեան EFG. թէ կին առն C յիսնեմեան եթէ կին D լինի E: — 65 եթէ DG որ C դ DEF ամս F, այլ ամ: — 66 ամ A եւ այլ f, իսկ ամս EF: — 67 կինն BCDG կին EF կին նորա A: — 69 ր. A այլ f .Ե.: — 70 ամ ԶԶ: — 71 դրաց ԶԶ: — 72 կատարեցէ A, ամ ABCG: — 74 լիցի BCDG: — 75 զաւանտ A: — 77 այսորիկ F այսորիկ G յուսան DEFG, դատերս EFG: — 78 խաւսեցեալ BCDG, ոք կին BDEF կին ոք C: — 81 շնա A: — 82 պաշտեցէ A: — 83 առցէ EF. ամ A ամս CDEF. Գ. ամ աւր EFG: — 85 դայթակղեցի CG. իս. իցէ BCD խորհրդով DG: —

մտցէ յապաշխարութիւն, Զ ամ դրան արտաքոյ եւ Գ՝ ընդ ապաշխարողս եւ Գ՝ աւրէնս մի առցէ:

ԺԳ. Եթէ ոք զոր ոչ իցէ խաւսեալ՝ յաւսցի, անիծեալ լիցի. անջատեցէք եւ տուք այլում եւ ոչ մեղանչէք:

90 ԺԴ. Եթէ ոք զկին [եհան առանց բանի պոռնկութեան, ինքն տայ շնալ նմա²⁵. ապա եթէ] թողցէ՝ [եւ] ապաշխարեցէ Ը ամ արտաքոյ, Զ ամ ընդ ապաշխարողս ելցէ. Ե ամ աւրէնս մի առցէ: [Այս փոխանակ ընդ իւր եւ ընդ կնոջն, որպէս ասաց Տէր, Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կեցջիք յաւիտեան²⁶. եւ յորժամ
95 ապաշխարիցէք եւ] խառնեցջիք²⁷, [պատարագ ձեր ընդունելի լիցին²⁸: Ապա եթէ նոյնպէս մեռջիք, մի տիրեսջիք ի նոսա²⁹. եւ մի թաղէք զնոսա, որպէս ասէ երանելի առաքեալն. Զի նոքա զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն³⁰: Եւ ոչ թէ նոքա միայն, այլ եւ որ կցորդ են նոցա:]

100 Զի որ զայս առնէ, յաւիտեան կացցէ³¹. եւ որ ոչն լսէ մահու մեռցի: Եւ եթէ յաշխարհի աստ ապաշխարութեանս այսպէս ոչ ապաշխարիցէք, իսկ յաշխարհին հանդերձեալ զի՞ գործիցէք:

86 ապաշխարութիւն D, դրան չունին BCD .դ. ամ աւր. BCDG: — 88 չիցէ F յուսցի EFG: — 90 եթող փոխ. եհան EF: — 91 նմա շնալ G, թէ AEF: — 93 որպէս եւ BCD տէրն F թէ A:

94 պահեցէք A պահեսջիք EF յաւիտեանս կեցջիք A: — 95 խառնեցիք A խառնիջիք G: — 96 պատարագ ABCDG պատարագին ք. (չիք ձեր) EF: — 98 զարքայութիւն Աստուծոյ ոչ կարեն ժ. G: — 99 եթէ EF կցորդն է C: — 100 կեցցէ BCDG կացցէ AEF. ոչ G: — 101 թէ A: — 101 ապաշխարութեանս A ոչ այսպէս BCDG այսպէս ոչ AE: — 102 աշխարհին B գործեցէք G:

²⁵ Մատթ. Ե. 32. «Եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ»:

²⁶ Յովհ. ԺԵ. 10. «Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք ի սէր իմ»:

²⁷ Այս ազաւարում եւ ընդլայնում հատուածի մէջ «խառնեցիք» իրրեւ «խառնեցի» սկզբնազրին մասն է:

²⁸ Հոով. ԺԵ. 16. «Եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի»:

²⁹ «Մի տիրեսջիք ի նոսա» ըլլալու էր կամ «նոցա» եւ կամ «ի վերայ նոցա»:

³⁰ Ա. Կոր. ԺԵ. 5. «Մարմին եւ արիւն զարքայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն»:

³¹ Ա. Յովհ. Բ. 17. «Իսկ որ առնէ զկամս Աստուծոյ, մնայ յաւիտեան»:

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՄԱՏՆԵԱԳՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՌԹԻՒ 1500ԱՄԵԱՅ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ

(444—1944)

Աշխարհախումբ բազմութիւն մը հաւաքուած էր Շահապիւփան, տօնախմբելու Նաւասարդաց օրերը, յատկապէս զիմաւորելու «Ամանորաբեր տօնը», 24 յունիս 444: Այնտեղ էին Հայոց Բանակը, Աւագ նախարարները, ազատ եւ ոստանիկ մարդիկ, շինական ժողովուրդը, նաեւ հայ եկեղեցականութիւնը, 40 եպիսկոպոս, բազմաթիւ վանականներ, երէցներ եւ սարկաւազներ:

Համբաւ տարածուած էր բերնէ բերան, թէ տօնախմբութեանս առթիւ տեղի պիտի ունենայ Շահապիւփան, ի բանակեացն Հայոց թագաւորաց, Ազգային Բարեկարգական ժողով մը: Այս հանգամանքը թեւ տուած էր հայ ուխտաւորներուն սովորականէն աւելի մեծ թուով ներկայ ըլլալու տօնակատարութեանց:

Առաջին համազգային Բարեկարգական ժողովը պիտի ըլլար այն: Անոր պէտքը շատոնց զգացուած էր, յատկապէս Ս. Սահակի (+ 7 սեպտ. 439) եւ Ս. Մաշտոցի (+ 17 փետր. 440) մահէն ետքը: Մինչ անոնք կենդանի էին, իրենց մեծ հեղինակութեամբ տէրն էին կացութեան. ունենալով իրենց առաջնորդ եւ կանոն Դիոնիսիոս Աղեքսանդրացոյ եւ «Նիկիական» կանոնները, այսինքն նախանիկիական, Նիկիական եւ յետ Նիկիական ժողովներու կանոնները, որոնք հայերէն թարգմանութեամբ ալ հրատարակուած էին: Կացութիւնը փոխուած էր 440էն ետքը: Արտաշէս թագաւոր (+ իբր 428) իր գահին վրայ յաջորդ չէր ունեցած: 428—443 պետութիւնը կառավարուեցաւ առանց տարակուսի պարսիկ կուսակալներով, որոնց անունը Պատմութիւնը չէ աւանդած մեղի¹: Իբր 443ին Հայոց մարզպան նշանակուեցաւ Վասակ Սիւնի, որ կանխաւ վարած էր վրայ մարզպանութիւնը: Ս. Սահակի մահէն ետքը տեղապահութեամբ եկեղեցական գործերը անտեսած էր

¹ Հմմտ. Հ. Ն. Ալիշեան, Եղիշ վարդապետ եւ իր Պատմութիւնն Հայոց պատերազմին: Մասն Բ. Վիեննա 1930, էջ 411—414: